

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ  
ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

«09» օգոստոս 2018թ. թիվ 7

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ  
ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2017թ.  
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի ԹԻՎ 15 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՐԳՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածի 7-րդ մասի 7-րդ կետը, հաշվի առնելով Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) հոգաբարձուների խորհրդի 2018 թվականի օգոստոսի 9-ի նիստի թիվ 4 արձանագրությունը, Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2017թ. հոկտեմբերի 3-ի թիվ 15 որոշմամբ հաստատված «Նույն զինծառայողի կապակցությամբ հատուցման դեպքի փոփոխության պարագայում վճարման ենթակա հատուցման գումարի վերահաշվարկման կարգը» լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ և 11-րդ կետերով.

«10. Եթե լրացել է զինծառայողի 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության ուժի մեջ լինելու ժամկետը՝ Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամ (այսուհետ՝ Հիմնադրամ) նախկինում ներկայացված բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող պետական մարմնի տված տեղեկանքի համաձայն, ապա Հիմնադրամի կողմից նշված

տեղեկանքում սահմանված օրվանից կասեցվում է զինծառայողին կամ այլ շահառուին վճարվող հատուցման գումարների ամսական վճարումների կատարումը մինչև սույն Կարգի 9-րդ կետով սահմանված համապատասխան պետական մարմնի սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանման կողմից Հիմնադրամին բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող պետական մարմնի տրված նոր տեղեկանքի ներկայացումը:

11. Տեղեկանքը ներկայացնելուց հետո Հիմնադրամը

1) Վերսկսում է զինծառայողին կամ այլ շահառուին վճարվող հատուցման գումարների ամսական վճարումների կատարումը տեղեկանքը ստանալուց հետո տվյալ ամսվա հերթական վճարման օրվանից, եթե զինծառայողի հաշմանդամության խմբում փոփոխություն տեղի չի ունեցել: Ընդ որում զինծառայողին փոխանցվում է կասեցված ամիսների համար չվճարված ամբողջ գումարը:

2) սույն Կարգի 4-րդ և 5-րդ կետերով սահմանված դեպքերում և կարգով կատարում է վերահաշվարկ: Սույն Կարգի 7-րդ կետով սահմանված օրը զինծառայողին կամ այլ շահառուին է փոխանցվում նաև մինչև վերահաշվարկի կատարումը կասեցված ամիսների համար չվճարված ամբողջ գումարը:

3) Տնօրենի որոշման հիման վրա դադարեցնում է զինծառայողին կամ այլ շահառուին վճարվող հատուցման գումարների ամսական վճարումների կատարումը, եթե զինծառայողը դադարել է լինել Օրենքով շահառու, մասնավորապես դադարել է Օրենքով սահմանված 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամությունը»:

Զինծառայողների կյանքին կամ առողջությանը  
պատճառված վնասների հատուցման  
հիմնադրամի հոգաբարձուների  
խորհրդի նախագահ՝

Դավիթ Տոնոյան